

4. ՀՀ-ում և արտասահմանում հրապարակված մենագրություններին, ինչպես նաև ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկի և արտասահմանյան ամսագրերի հոդվածներին հասկացվող միավորների տարբերությունների վերաբերյալ դժգոհություններ: Ոմանք պնդում են, որ այդ տարբերությունները պետք է լինեն մեծ, իսկ մյուսները պնդում են հակառակը: Գիտության կոմիտեն առաջարկում է նախ գիտական աշխատությունը որպես մենագրություն դասակարգելու համար սահմանել լրացուցիչ պահանջ այն մասին, որ հեղինակ(ներ)ի գիտական աշխատությունների վրա եղած հղումները կազմեն ընդհանուրի առնվազն 30%-ը, ինչպես նաև սահմանել մեծ տարբերություն ՀՀ-ում և արտերկրում օտար լեզվով հրատարակված մենագրությունների գնահատման ժամանակ: Առաջարկվում է նաև մեծացնել հանրապետական ամսագրերում և միջազգային գիտատեղեկատվական ցանկերում ընդգրկված ամսագրերում հրապարակված հոդվածների գնահատականների տարբերությունը: Առաջարկների կոնկրետ տարբերակները մշակված են, և պատրաստ ենք դրանք քննարկել ոլորտի մասնագետների հետ:

Եվ վերջում պետք է նշել, որ ընդհանրապես, գիտության բնականոն զարգացումը մեր բոլորի գործն է, ոլորտի բարեփոխումների մշակման և իրականացման համար պատասխանատվություն կրում են կառավարչական մարմինը/ մարնինները, գիտական կազմակերպությունների և բուհերի ղեկավարները և ակտիվ աշխատող գիտաշխատողները: Այս երեք կողմերի փոխգործակցության արդյունավետությունը, հաջողությունը կամ անհաջողությունն ուղիղ ազդեցություն են թողնում բարեփոխումների ընթացքի վրա և պայմանավորում վերջնական արդյունքը: Այդ իմաստով Գիտության կոմիտեն շնորհակալ է բոլորին իր գործունեության նկատմամբ նման ուշադրություն ցուցաբերելու, ինչպես նաև՝ աչալուրջ լինելու, գիտությանը վերաբերող գործընթացների նկատմամբ սրտացավ գտնվելու և, ինչու չէ, նաև մեզ օգնելու համար: